# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/145 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 7 | Ճտքավոր կոշիկ | Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի | «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ | 7. Ճտքավոր կոշիկներ – խոշոր եղջերավոր անասունի հարթ /առանց նակատի/, սև գույնի, առաջին կարգի կաշվից՝ մշակված անջրանցիկ ծածկույթով (արգելվում է օգտագործել սպիլոկ կամ խոզի կաշի)։ Կազմված է կոշկերեսի երեսամասից, հետնամասի արտաքին գոտուց, ճիտքերից, լեզվակից, հիմնական ներդիրից, ներբանից և տակացուից։ Ասեղնագործության տեսակը՝ լիցք, 3,5-4 կարակութ/սանտիմետրում։ Կոշկերեսի և հետնամասի կաշին առնվազն 2մմ հաստության, լեզվակից ճտքերին միացող հատվածը 1.5+/-0.2մմ հաստության իսկ ճտքերը ծալվածքով 2-2.5մմ հաստության կաշվից, քթամասը և կրունկամասը կոշտ։ Քթամասում և կրունկամասում ներսից միջադրվում են թերմոպլաստ, որն ապահովում է մինչև 50 Ջոուլ էներգիայով հարվածից պաշտպանվածություն։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձով կապակցված, առնվազն 2.8 մմ հաստության բնական հումքից, պադոշից և կոշիկի համար նախատեսված 1.8մմ հաստության ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Կոշիկի երեսամասի ներսի հատվածը մշակվում է 240-245 գրամ մակերեսային խտությամբ 100% բամբակ բաղադրությամբ կտորից: Կոշիկի հետևամասը երեսի կաշվից (ընդհանուր հետնամասի հաստությունը 2.5մմ): Լեզվակը՝ փակ փականով: Կոշիկի ճտքերի բարձրությունը՝ 22+/-1 սմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներսի մասով հիմնական ներդիրից մինչև ճտքի վերին եզրը: Տակացուն՝ միաշերտ, մաշվածադիմացկուն, յուղակայուն ռետինից՝ խիստ արտահայտված պահպանաշերտով, նախատեսված +/-50 °C պայմաններում կրելու համար: Տակացուի վրա առկա է դրոշմ յուղակայունության վերաբերյալ: Տակացուն միանում է կոշկերեսին՝ դառնալով մեկ ամբողջություն: Կոշիկը ոտքին հարմարեցվում է ճտքերի վրա ամրացված մետաղյա փոլակներով անցնող կոշկաքուղերով և ներսամասին մշակված N5 տեսակի երկկողմանի շղթայով: Շղթան ողջ երկայնքով երկկողմանի մշակված է պաշտպանիչ փականներով: Կոշկաքուղերը քիմիական մանրաթելից արտադրված 4-5 մմ տրամագծով և 150-160 սմ երկարության քուղերով: Կոշիկի միջադիրը՝ ստելկան, առնվազն 3 մմ հաստության բնական նյութից՝ պադոշից: Կոշիկը տակամասում ունի դրոշմ՝ վրան նշված չափը, իսկ ճտքերի վրա նշված արտադրող կազմակերպության |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը: Կոշիկի չափսերը կտրամադրվեն պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Փաթեթավորումը՝ գործարանային, ստվարաթղթե արկղերով, պիտակավորված: Պիտակի վրա նշված են՝ տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, տեխնիկական պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժան համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի: Պատվիրատուի պահանջով Մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի մատակարարվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին լաբորատոր փորձաքննության եզրակացություն՝ տրված ՀՀ պետական հավաստագիր ունեցող լաբորատոր փորձաքննական կենտրոնի կողմից: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/145 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 7 | | | | |